# ԷՋԵՐ ՀԱՅԿԱԿԱՆ ՌՈՔԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԻՑ
# ՄԱՍ Ա.- ՀԱՅԵՐԸ ՌՈՔՈՒՄ

**ՄԱՆԷ ԽԱՌԱՏԵԱՆ**
art.phil.maneh@gmail.com

ՄՈՒՏՔ

Մինչ օրս հայկական երաժշտական ժառանգութեան ուսումնասիրութիւնը ներառել է գրեթէ միշտ ազգային աւանդական եւ դասական երաժշտութիւնները: Բայց այս յօդուածը վերաբերում է ռոքին՝ Հայաստանում ու Սփիւռքում, եւ հայկական ռոքի պատմութեանն ու խնդիրներին:

Այս յօդուածով մենք սկսում ենք շարք հայկական իրականութեան մէջ ռոքի դրսեւորումների վերաբերեալ: Յօդուածաշարը բաղկացած է երեք մասից.- մաս Ա.՝ հայերը ռոքում, որը վերաբերում է Սփիւռքի ներկայացուցիչների անդամակցութեանը տարբեր ռոք խմբերի կազմում: Մաս Բ.՝ ռոքը Հայաստանում, որը ներառում է հայաստանեան իրականութեան մէջ ստեղծուած տարբեր ռոք խմբերի եւ երաժիշտների գործունէութիւնը: Իսկ Գ. յօդուածում կ'անդրադառնանք հայկական ֆոլկ-ռոքին՝ որպէս ռոքի ինքնուրոյն տեսակ եւ հայկական ինքնութեան դրսեւորում:

Յօդուածի նպատակն է հայկական ռոքը բերել գիտական ուսումնասիրութեան դաշտ եւ հնարաւորինս մէկտեղուած տեղեկութիւններով կատարել դրա այժմեան միտումների վերլուծութիւնը: Մեր խնդրից դուրս է կատարել երաժշտագիտական վերլուծութիւն. սոյն աշխատանքում ռոքին կ'անդրադառնանք որպէս պատմամշակութային եւ հասարակական իրողութիւն, իսկ նեղ մասնագիտական անդրադարձն արուել է այնքանով, որքանով անհրաժեշտ է եղել: Քանի որ հայկական ռոքը չի ուսումնասիրուել գիտականօրէն, անհրաժեշտաբար օգտուելու ենք էլեկտրոնային, համացանցային աղբիւրներից, հնարաւորութեան դէպքում նաեւ կ'աշխատենք հարցազրոյցներ ունենալ տարբեր խմբերի անդամների կամ երաժշտների հետ:

Եթէ աւանդական երաժշտութեան խնդիրներն ուսումնասիրելու համար կան երաժշտագէտներ, ազգագրագէտներ, ինչպէս Միհեր Նաւոյեանը[1],

[1] Նա հեղինակ է 2 մենագրութեան՝ *Տաղերի ժանրի ծագումնաբանութիւնը եւ ազատ մեղեդիական մտածողութեան դրսեւորումը հայկական միջնադարեան մասնագիտացուած երգարուեստում* (2001), *Դրուագներ հայ երաժշտութեան պատմութիւնից* (2009), եւ շուրջ 40 գիտական յօդուածների:

Թովմաս Պօղոսեանը[2], Արամ Ղանալանեանը[3], Հռիփսիմէ Պիկիչեանը[4], ապա հայկական ռոքի ուսումնասիրութիւնն այլ վիճակում է: Հայաստանում ռոք լսողները մեծ մասամբ նախընտրում են արտասահմանեան ռոքը՝ յատկապէս ԱՄՆում յայտնի դասական ռոք կատարողներին, շատերը արեւմտեանին զուգահեռ լսում են նաեւ ռուսական ռոք, իսկ հայկական ռոք լսում են գրեթէ բոլորն, ովքեր գոնէ մի քիչ ծանօթ են այդ երաժշտութեանը: Իսկ հեռաւոր արեւելքի ռոք երաժշտութիւն՝ ճապոնական, հնդկական, լսում են շատ աւելի քիչ եւ նոյնիսկ գուցէ չիմանան դրանց գոյութեան մասին (յամենայն դէպս, տպաւորութիւնն այնպիսին է, որ առաջին տեղում արեւմտեան ռոքն է)[5]: Ռոքի պատմութեան, տեսակների ու ենթատեսակների մասին տեսական գիտելիքներին էլ տիրապետում են կրկին քիչ թուով մարդիկ: Այնուամենայնիւ ռոքի վերաբերեալ գիտական ուսումնասիրութիւնների սակաւութեան պայմաններում, բաւականին շատ են լրագրական յօդուածները, վերլուծութիւնները եւ հարցազրոյցները: Հայկական ռոքի մասին գրում է armrock.am[6] կայքը, որը ստեղծուել է Arm Rock ընկերութեան հիմնադիր տնօրէն, «Dogma» ռոք խմբի հիմնադիր եւ բաս-կիթարահար, «Ռոք ընկերակցութիւն»ի նախագահ Վարդան Գրիգորեանի կողմից եւ ներառում է Հայաստանում գործող ռոք խմբերի գործունէութիւն: Կան նաեւ antirabizkyart.blogspot.com կայքը[7], ինչպէս նաեւ մշակոյթի եւ արուեստի մասին գրող կայքերն ու պարբերականները (hy.armradio.am, bravo.am,

---

[2] ՀՀ ժողովրդական արտիստ, բանասիրական գիտութիւնների դոկտոր, Կոմիտասի անուան երաժշտանոցի պրոֆեսոր եւ «Սայեաթ-Նովա» մշակութային միութեան ղեկավար, որը յայտնի է ոչ միայն որպէս ժողովրդական եւ աշուղական երգերի կատարող, այլ նաեւ որպէս մոռացման ենթակայ մի շարք երգերի փրկիչ, բանահաւաք, մանկավարժ:

[3] Հեղինակած աշխատանքներից եւ յօդուածներից են «Հայ շինականի աշխատանքի երգերը», «Նմուշներ հայկական հակակրօնական ֆոլկլորից», «Աւանդապատում», «Կոմիտասը եւ ժողովրդական երգի բանաստեղծական խօսքը», «Հայրենական պատերազմի տարիների հայ բանահիւսութիւնը» եւն.:

[4] Հեղինակ է բազմաթիւ յօդուածների եւ մենագրութիւնների, որոնցից են «Նուագարաններն ու ձայնեղ գործիքները հայ մանուկների կենցաղում. ազգաբանական դիտարկումներ», «Երաժշտութիւնը հայոց աւանդական առտնին եւ տօնածիսական կեանքում», «Տիեզերաստեղծ պատկերացումները հայ աւանդական նուագարանագործական մշակոյթում», «Աւանդական երաժշտութեան քաղաքային կենսընթացը» եւն.:

[5] Ընկերային ցանցերում կատարուել է հարցում, արդիւնքներն այստեղ՝ https://medium.com/@daniel.azizyan/1%D5%BC%D5%B8%D6%84%D5%A8-%D5%A5%D6%80%D6%87%D5%A1%D5%B6%D5%B8%D6%82%D5%B4-c37964f8404b :

[6] Տես՝ https://armrock.am/ :

[7] Տես՝ https://antirabizkyart.blogspot.com/ :

evnmag.com եւն.), լրագրողներ Նայիրա Հայրեպետեանը, Յասմիկ Բարխուդարեանը, Շուշան Յարութիւնեանը եւ այլք:

ՆԵՐԱԾՈՒԹԻՒՆ

Ռոքն առաջացել է Բ. աշխարհամարտից յետոյ՝ 1950-60ականներին Եւրոպայում եւ ԱՄՆում: Ռոքի հիմքում ընկած է պայքարի գաղափարախօսութիւնը, նորարար-փորձարարական մօտեցումը, արհեստագիտական միջոցների օգտագործումը: Ռոքի շնորհիւ դասական երաժշտական գործիքները մեծապէս բարելաւուեցին՝ ձայնի հնչեղութիւնը եւ հզօրութիւնը յարմարեցնելով մեծ դահլիճներում ելոյթների համար[8]: Իր հնչեղութեան եւ զանգուածայնութեան շնորհիւ ռոքը դարձաւ պայքարի գործիք յատկապէս 1970ականներին՝ սեռային եւ մշակութային յեղափոխութեան ժամանակ, որի սկիզբը դրուեց յայտնի Վուդստոքեան ռոք փառատօնով: Այն սկսուել էր 1969ի Օգոստոսի 15ին, տեւել 3 օր՝ մինչեւ Օգոստոսի 18ը: Փառատօնն անցկացուել է ԱՄՆի Նիւ Եորք նահանգի Բեթէլ տեղանքում՝ Վուդստոքից 40 մղոն հարաւ-արեւմուտք՝ Ուոլկիլ փոքրիկ քաղաքում: Փառատօնը ոչ միայն միաւորեց բազմաթիւ երաժիշտների եւ երաժշտասէրների, այլեւ նպաստեց ռոքի աննախադէպ հանրահռչակմանը: Այդ ժամանակ ռոք մշակոյթի ներկայացուցիչները հակապատերազմական[9] քարոզչութեամբ եւ ազատ ապրելակերպով աւելի շատ ստիպում էին թերահաւատօրէն վերաբերուել իրենց, քան վստահութիւն էին ներշնչում: Իրականում, դա գիտակցուած եւ նպատակային հակադրում էր այն իրականութեանը, որն իր թուացեալ կարգապահութեամբ պատերազմների միջոցով է դրսեւորւում: Նրանք գերադասում էին տարբերուել իրենց կենսակերպով՝ ընդգծուած ի ցոյց դնելով այդ տարբերութիւնը: Այնուամենայնիւ թեթեւ թմրամիջոցների հանդէպ նրանց հակումներն ու ազատ յարաբերութիւնները չէին նպաստում հանրային վստահութեան ձեւաւորմանը: Իվերջոյ, դա դարձաւ ռոք մշակոյթի ներկայացուցիչների կարծրատիպային կերպարի ձեւաւորման անկիւնաքարը: Իսկ Վուդսթոքը այսօր հոմանիշ է ոչ միայն ազատութեան, խաղաղութեան համար պայքարի, այլեւ լրջագոյն երաժիշտների կենսագրութեան եւ ռոքի պատմութեան կարեւոր փուլերից է: Այն օգնեց ձեւաւորել քաղաքացիական

---

[8] 1930ականներին ջազ կիթառահարները անհրաժեշտութիւն զգացին ուժեղացնել իրենց գործիքների ձայնը: Էլեկտրական կիթառի պատմութիւնը վերաբերում է 1930ին, երբ լարային գործիքների ազգային ընկերութեան (National String Instrument Company) աշխատանքից ազատուելով Ջորջ Բոշամպը (George Beauchamp) սկսեց աշխատել լարային գործիքների ձայնը մեծացնելու նոր մեթոդներ գտնելու ուղղութեամբ: Նման խնդրի հանրաճանաչ լուծումը էլեկտրական շարժիչների, ելեկտրաձիների, հնչիւնագրիչի ասեղների եւ ձայնային բարձրախօսների դէպքում աշխատող էլեկտրական հոսանքի ուժն էր:

[9] ԱՄՆում ռոքը բացայայտ դիրքորոշում ունէր ընդդէմ վիետնամեան պատերազմի, եւ այդ դիրքորոշումը հակասում էր պետական քաղաքականութեանը:

մտածողութիւն այն ժամանակուայ երիտասարդների շրջանում՝ իրենց ձայնն ու կարծիքը լսելի դարձնելու համար:

Խորհրդային միութեան իրականութիւնը թէեւ մի փոքր այլ էր, բայց այն եւս ունեցել է փառատօնային յեղաշրջում: Դրամատիրական աշխարհից մեկուսացումը ստիպում էր խորհրդային հասարակութեանը զարգանալ այլ ուղղութեամբ եւ դա վերաբերում էր նորաձեւութեանը, գրականութեանը, տնտեսութեանը, արուեստին եւն.: Միայն ԽՍՀՄ ղեկավար Իոսիֆ Ստալինի մահից յետոյ (1953), Նիկիտա Խրուշչովի ղեկավարման օրօք մի որոշ չափով սկսուեց ազատականացում եւ արեւմուտքի մշակութային միտումների ներթափանցում: Այդ միտումներից մէկը «Երիտասարդութեան եւ ուսանողութեան փառատօնն» էր 1957ին: «Խորհրդային Միութիւնը, փորձելով կարգաւորել յարաբերութիւնները Արեւմուտքի հետ, ստանձնեց 1957ին Մոսկուայում այդ փառատօնի անցկացման դերը: Այս իրադարձութիւնը արմատապէս փոխեց խորհրդային երիտասարդութեան աշխարհայեացքը: Փառատօնը տեւեց երկու շաբաթ, որի հիւրերն էին 34,000 մարդ աշխարհի 131 երկրից»[10]: Փառատօնից յետոյ ԽՍՀՄում յայտնուեց *ջինսային* (jeans) նորաձեւութիւնը եւ, իհարկէ, ռոք-ն-ռոլը, որն աստիճանաբար ռոքի վերածուելու ուղու վրայ էր, չնայած քաղաքականութիւնը դեռեւս շարունակում էր վերահսկել հասարակական կեանքի բոլոր ոլորտները:

Խորհրդային ռոքը ձեւաւորւում էր խորհրդային իրականութեան սահմաններում, որտեղ «*...երիտասարդական նոր երաժշտութիւնն ընկալուեց որպէս ժամանակաւոր զուտ լուսանցքային արեւմտեան մշակութային երեւոյթ, որը գտնւում է հիմնական հասարակական եւ մշակութային գործընթացների սահմանին, ներառեալ այն գործընթացները, որոնք գնահատուել են որպէս գաղափարապէս խորթ*»[11]: Ապա այդ երաժշտութեան ըմբոստ ոգին ընկալուեց միաժամանակ նաեւ հակաբուրժուական եւ ընդունելի դարձաւ ԽՍՀՄ տարածքում: Բայց քանի որ այն ձեւաւորուեց խորհրդային երաժշտութեան աւանդոյթների շրջանակներում, այն էականօրէն տարբերւում էր արեւմտեան ռոքից եւ շատ աւելի մօտ էր դասական՝ կիթարով երգեցողութեանը: Բայց արեւմուտքի ռոքին նմանակելու ձգտումները ստիպում էին տարբեր միջոցներ փորձել գործիքաւորման եւ երգեցողութեան մէջ, սկսած արտասահմանեան խմբերի երգացանկը կրկնօրինակելուց: Աստիճանաբար խմբերը համալրուեցին նաեւ էլեկտրական ու բաս-կիթարի

---

[10] О. С. Празднова, «Специфика проникновения рок-культуры в СССР» (Ռոք մշակոյթի ԽՍՀՄ ներթափանցման առանձնայատկութիւնը. արժէքները եւ իմաստները), *Ценности и смыслы*, 3(49):2017, էջ 115:

[11] С. Г. Дюкин, «Официальный советский рок-дискурс: исторические этапы и смысловое наполнение» Дюкин С.Г. Официальный советский рок-дискурс: исторические этапы и смысловое наполнение (Պաշտօնական խորհրդային ռոք-հայեցակարգը. պատմական փուլերը եւ իմաստային լրացումները), *Общество. Среда. Развитие*, 1:2019, էջ 58:

հնչիւններով: Կարեւոր նշանակութիւն էր տրւում նաեւ երգի խօսքերին, որոնք դարձել էին այն ժամանակուայ հասարակական գործընթացների արտացոլումը: 1989ին Խորհրդային Ռուսաստանի «Կինօ» խումբը կատարեց «Փոփոխութիւններ եմ ուզում» երգը (Хочу перемен!) եւ նոյն թուին գերմանական «Սքորփիոնզ» խումբը ԽՍՀՄ գլխաւոր քարտուղար Միխայիլ Գորբաչովի ներկայութեամբ առաջին անգամ կատարեց «Փոփոխութիւնների քամի» (Wind of Change) երգը, ինչը պարզապէս զուգադիպութիւն չէր. այն աննախադէպ գաղափարական միաւորում էր արեւմտեան եւ խորհրդային ռոք արուեստի պատմութեան մէջ: Արեւմուտք-ԽՍՀՄ քաղաքական հակադրութեան պայմաններում երաժշտական միջավայրում այլ իրավիճակ էր. երկուստեք հասկանալով փոփոխութիւնների անհրաժեշտութիւնը՝ ռոք երաժիշտներն արուեստի լեզուով բարձրաձայնում էին նոյն բանը:

Ֆրիդրիխ Նիցշէն իր *Մարդկային, չափազանց մարդկային* գրքում երաժշտութեան մասին գրում էր, որ երաժշտութիւնն ընդամէնը կրկնուող կշռոյթով հնչող ձայն է, եւ այն, որ երաժշտութեան մէջ կան որոշակի զգայութիւններ, զգացմունքներ կամ խորհրդանշաններ, ընդամէնը մեր սեփական գիտակցութեան ձգտումն է:[12] Երաժշտասէրները կարող են տարօրինակ համարել այս տեսակէտը, քանի որ սեփական փորձով գիտեն՝ ինչ զգայական ազդեցութիւն ունի երաժշտութիւնը լսողի վրայ: Երաժշտական կատարումները, օրինակ համերգերի ժամանակ, կարող են ոչ միայն ստիպել ապրել որոշ զգայութիւններ, այլեւ կարող են միեւնոյն գաղափարով վարակել միանգամից մեծ, շատ մեծ քանակի մարդկանց: Բայց նոյն երաժշտասէրները կը հաւաստեն, որ որոշ երաժշտութեան ազդեցութիւնն զգալու համար անհրաժեշտ է այդ երաժշտութեան հանդէպ որոշակի վերաբերմունք ունենալ: Ըստ էութեան հենց այդ վերաբերմունքն է, որ էապէս ազդում է մեր զգայական վիճակի վրայ: Այս հարցում թերեւս Նիցշէն իրաւացի է. մենք ազդւում ենք երաժշտութիւնից, քանի որ ինքներս ենք ձգտում ազդուել: Սրա հիմքում կարող են լինել շատ տարբեր հոգեբանական անհատական գործօններ: Կարո՞ղ է արդեօք օրինակ ռոքը յուզել նրան, ով չի սիրում ռոք: Թերեւս չի կարող: Կարո՞ղ է արդեօք երգի առաջ քաշած տեսակէտը թուալ ճշմարիտ, եթէ այդ երգի հանդէպ հետաքրքրութիւն չկայ: Ինչպէ՞ս է պատահում, որ նոյն երաժշտական ոճը կամ տեսակը կարող է դուր գալ մի ողջ տարածաշրջանի բնակիչներին կամ դարաշրջանի կրողներին, իսկ միւսների համար ոչինչ չնշանակել: «...*Մարդկանց մեծամասնութիւնն ունի յստակ երաժշտական համակրութիւններ եւ հակակրանքներ՝ անկախ իրենց երաժշտական գիտելիքների մակարդակից. նոյնիսկ նրանք, ովքեր կարող են հպարտօրէն (եւ սխալմամբ) իրենց բնութագրել որպէս անտարբեր, ամե-*

[12] Ф. Ницше, *Человеческое, слишком человеческое: Книга для свободных умов*, (Մարդկային, չափազանց մարդկային. գիրք ազատ ուղեղների համար), Սանկտ Պետերբուրգ, 2018, էջ 178:

*նայն հաւանականութեամբ, ունեն նախապատրաստութիւններ: Անհատական նախասիրութիւնները, որոնք գրականութեան մէջ նկարագրւում են որպէս «երաժշտական ճաշակ», կարող են լինել մարդու ինքնագնահատականի անբաժանելի մասը, եւ դա յատկապէս յստակ է արտայայտւում դեռահասութեան շրջանում: Յոյց է տրուել[13], որ երաժշտական ճաշակը կապուած է տարիքի, երաժշտական պատրաստուածութեան մակարդակի եւ ճանաչողական ոճի եւ անհատականութեան ոլորտների հետ, եւ առաջարկուել են «ճաշակի մշակոյթ» եւ «ճաշակի հասարակութիւն» հասկացութիւնները՝ բացատրելու համար, թէ ինչպէս կարող են ընկերային խմբերը ունենալ նախասիրութիւնների եւ արժէքների տարբերակիչ մոդէլներ»*[14]: Ըստ էութեան, այդ տարբերակիչ մոդէլները կարող են միաւորել որոշակի քանակի մարդկանց, եւ այդ միաւորումները, դառնալով հաղորդակցութեան միջոց, յաճախ ստեղծում են միջավայր ընդհանուր ճաշակի, մտածողութեան, գաղափարախօսութեան եւ կենսակերպի շուրջ: Նման խմբերի անդամները ամբոխավարութեան դասական կանոնների համաձայն[15] միմեանց «վարակում են» եւ՛ տրամադրութեամբ, եւ՛ գաղափարներով, եւ՛ կենսակերպով: Ահա թէ ինչու այն պատմական իրադարձութիւնների յենքում, որ տեղի էին ունենում Ի. դարի կէսերին - ինչպէս օրինակ Բ. աշխարհամարտը կամ Վիետնամի պատերազմը - ստիպում էին զգալի քանակով մարդկանց խմբերին միատեսակ մտածողութիւն եւ վերաբերմունք դրսեւորել այդ իրադարձութիւնների հանդէպ: Իհարկէ, խնդիրը միայն նոյն երաժշտութիւնը լսելը չէ. ըստ էութեան, նման մտածողութիւն ունենալը ենթադրում է կրթական եւ կենսակերպի ընդհանուր մակարդակ, ինչն էլ նոյն տարածաշրջանում եւ նոյն ժամանակաշրջանում բնակուելու համադրութեամբ որպէս հետեւանք յանգեցնում է նման նախընտրութիւնների ձեւաւորմանը: «Լայն իմաստով, հասարակական աշխուժութեան տեսութիւնը[16] պնդում է, որ հասարակական-մշակութային աշխուժութիւնը հասարակութեան բաղադրիչն է: Անհատական եւ հաւաքական «անելիքների եւ ստեղծելիքների» շնորհիւ է, որ ձեւաւորւում են մշակոյթը, հասարակութիւնը եւ մարդկային բոլոր ինստիտուտները, ընկերային հիմքով կառուցուած գիտելիքներն ու իմաստները: Այս տեսանկիւնից «մշակոյթը» հասարակական գործունէութեան բարդ

---

[13] D.J. Hargreaves, *The Developmental Psychology of Music*, Cambridge University Press. Cambridge, 1986. նաեւ՝ A.E. Kemp. *The Musical Temperament: Psychology and Personality of Musicians*, Oxford University Press, 1996:

[14] D. J. Hargreaves, D. Miell, A.R. Macdonald, "What are Musical Identities, and Why Are they Important?" Oxford University Press, 2002:

[15] Տես՝ С. Московичи, «Век толп. Исторический трактат по психологии масс» (Ամբոխների դարը. պատմական ակնարկ ամբոխների հոգեբանութեան մասին), «Центр психологии и психотерапии», Մոսկուա, 1998:

[16] T.R. Schatzki, K. Knorr-Cetina, and E. von Savigny, *The Practice Turn in Contemporary Theory*, Routledge, New York, 2001:

ցանց է[17], որ խթանում, պահպանում եւ կատարելագործում է նիւթականացուած գործողութիւնների միջոցով: Հասարակական-մշակութային գործունէութեան եւ նիւթականացման նման առաջնահերթութիւնը բանականութեան եւ անմարմին խորհրդածութեան լուսաւորչական իդէալների նկատմամբ յանգեցնում է մարդկային «Ես»ի փոխակերպուած գաղափարի»[18]: Եսը Մենքի փոխակերպելու հիմքերից մէկը նաեւ միեւնոյն զգայական հոգեվիճակում լինելն է. երբ բազմաթիւ անհատներ, գտնելով ընդհանուր նախընտրելի երեւոյթ այդ ընդհանրութեան միջոցով միմեանց հանդէպ համակրանք են ձեռք բերում եւ յետագայում միաւորւում նաեւ այլ հարցերի շուրջ: Վուդստոկի եւ Մոսկուայի փառատօների պատմական լինելը պայմանաւորուած էր նաեւ նրանով, որ միաժամանակ շատ թուով մարդիկ, մի ամբողջ սերնդի ծաւալով, հնարաւորութիւն ստացան իրենց մէջ նոյն գործօններով պայմանաւորուած հասունացող դժգոհութիւններն արտայայտել եւ նոյն մտածողութեան ու գործողութիւնների կրող դառնալ:

Մինչեւ ուշ 1960ականները դասական ռոքի շրջանն էր, երբ ռոք երաժշտութեան մի շարք տարբեր ենթաժանրեր ի յայտ եկան ներառելով խառնուրդներ, ինչպիսիք են՝ բլուզ ռոքը (blues rock), ֆոլկ-ռոքը (folk rock), քանթրի ռոքը (country rock), ռագա ռոքը (Raga rock)[19] եւ ջազ ռոքը (jazz rock), որոնցից շատերը նպաստել են ցնորական ռոքի զարգացմանը, որն ազդեցութիւն էր կրել հակամշակոյթ, ցնորական եւ հիպի ասպարէզից: Նոր ժանրերը, որոնք ի յայտ եկան, ներառում էին յառաջադիմական ռոքը, որն ընդլայնեց արուեստագիտական տարրերը, գլէմ ռոքը (glam rock, glitter rock)[20], որը կարեւորեց ցուցադրութիւնը եւ տեսողական ոճը, ընկերային եւ քաղաքական եռանդուն քննադատութիւնները եւ հեւի մետալի (heavy metal) տարբերուող եւ տեւական ժանրը, որը շեշտում էր ձայնը, ուժը եւ արագութիւնը: 1970ականների երկրորդ կէսին փանք ռոքն (Punk Rock) արձագանգեց ստեղծելով նուազապաշտական, ընկերային եւ քաղաքական եռանդուն քննադատութիւններ: Փանկն ազդեց 1980ականների նիւ ուէյւ (new wave), փոստ-փանկ (post punk) եւ իվերջոյ *ալտերնատիւ* ռոք (alternative rock) ժանրերի վրայ: 1990ականներից սկսած *ալտերնատիւ* ռոքն սկսեց

---

[17] Z. Bauman, *Culture as Praxis*, Sage Publications, London, 1999:

[18] D. J. Elliott, M. Silverman, "Why Music Matters: Philosophical and Cultural Foundations", *Music, Health, and Wellbeing*, ed. Raymond MacDonald, Oxford University Press, USA, 2012:

[19] Ռագան ռոք եզրոյթ է, որն ի յայտ է եկել 1960ականների երկրորդ կէսին եւ կոչուած է նկարագրելու եւ ամփոփելու ռոք երաժշտութեան եւ հնդկական երաժշտական մշակոյթի փորձարական համադրութեան առաջին արդիւնքները:

[20] Ծագել է Մեծ Բրիտանիայում 1970ականների սկզբին եւ դարձել այդ տասնամեակի առաջին կէսի գերիշխող ժանրերից մէկը: Գլէմ ռոք կատարողների համար բնորոշ էին վառ կերպարներ՝ արտայայտուած թատերական տեսարայնութեան եւ արտասովոր հագուստների, վառ դիմաշպարի եւ այրածին տեսքի միջոցով:

գերիշխել ռոք երաժշտութեան մէջ եւ ներխուժեց գրանջի (Grange), Բրիտ-փոփի (Britpop) եւ ինդի ռոքի (Indie rock) ձեւով: Այդ ժամանակուանից յետագայ միաձուլուած ենթաժանրերը ի յայտ եկան՝ ներառելով փոփ փանկը (pop punk) , ռէփ փանկը (rap punk) եւ ռէփ մետալը (rap metal), ինչպէս նաեւ ռոքի պատմութիւնը վերափոխելու գիտակից քայլեր՝ ներառելով գերիջ ռոքի (garage rock), փոստ-փանկի եւ սինթ-փոփի (post punk եւ Synth-pop) վերածնունդը 2000ականների սկզբերին:

ՀԱՅԵՐԸ ՌՈՔՈՒՄ

Երբ պատմական թէ այլ իրադարձութիւնների հետեւանքով հնագոյն ժամանակներից հայկական բարձրաւանդակում բնակուող հայ ժողովուրդը ստիպուած եղաւ ծաւալուն տեղաշարժ կատարել աշխարհով մէկ[21], առաջացան հայկական գաղութներ բոլոր մայրցամաքներում: Այժմ աշխարհի բոլոր երկրներում կան Ցեղասպանութիւնից փրկուածների ժառանգներ: Բնակուելով այդ երկրներում, նրանք կրում են այն գաղափարական եւ մշակութային ազդեցութիւնը, որում յայտնուել են: Սա բնական է, քանի որ նրանք յայտնուել են այն իրականութիւնում, որն էլ կրում է այդ մշակոյթը: Միաժամանակ, սակայն, նրանք կրում են այդ իրականութիւնից տարբեր նոյն պատմական յիշողութիւնն ու նոյն իրադարձութիւնների հետեւանքը: Աւագ սերնդի՝ հայոց մշակոյթի եւ լեզուի պահպանման ուղղութեամբ ջանքերին զուգահեռ, երիտասարդները շատ աւելի ազդուած են նաեւ այդ նոր մշակոյթի կողմից, որում յայտնուել են, քան այն, որը կրում էին իրենց ծնողները: Նման մշակութային գերիշխանութեան պայմաններում ինքնութեան պահպանման խնդիրը դառնում է ամէնօրեայ խնդիր, որի լուծման համար կիրառւում են տարբեր գործիքակազմեր: Իսկ եթէ տուեալ պետութիւնն իր հերթին չի ապահովում հայկական դպրոցների կամ եկեղեցիների առկայութիւնը եւ նպատակային քաղաքականութիւն է վարում հայ ինքնութեան ոչնչացման ուղղութեամբ, այդ խնդիրն այլեւս դառնում է գոյապահպան լուրջ հարց: *«...քանակական եւ դրանից բխող որակական կորուստները, հետեւանք են ազգի մօտ ընթացող ու ժամանակի մէջ արագացող գործընթացների, որոնք առաջացնում են էթնիկ վերարտադրման եւ պահպանման բազմաթիւ հիմնախնդիրներ Հայաստանի եւ յատկապէս Սփիւռքի բոլոր հատուածների համար: Այս արագ փոփոխուող իրավիճակներում Սփիւռքի գերակշռող մասը ներկայացուած է բազմաթիւ ցրուած եւ*

[21] Խօսքը ԺԹ. դարավերջից սկսած եւ Ի. դարում մեծ ծաւալներ ստացած Հայոց Ցեղասպանութեան մասին է: Թէեւ արտագաղթին նպաստել են նաեւ խորհրդային եւ յետխորհրդային ժամանակաշրջանում տեղի ունեցած երկրաշարժը, Արցախեան պատերազմը եւ այլ իրադարձութիւններ:

*մասամբ* դիսկրէտ[22] *խմբերով, որոնց տարածական ցրուածութիւնն աննախադէպ է*»[23]:

Սփիւռքի՝ ընդունող երկրների տնտեսական հասարակական կեանքին անհրաժեշտաբար մասնակցութիւնը յանգեցրել է նաեւ մշակութային եւ քաղաքական գործունէութեանը մասնակցութեան: Տասնամեակների ընթացքում այդ ներգրաւուածութեան շրջանակներում առաջացել են մշակութային միաւորներ՝ հայկական համայնքներ, որոնք բացի ընդունող երկրի մշակութային աշխուժութիւնից մտահոգուած են իրենց ինքնութեան պահպանմամբ: Այս երկուսի համադրութիւնը երաժշտական բնագաւառում դրսեւորուել է երաժշտական խմբերի ձեւաւորմամբ, որոնք իրենց հասանելի միջոցներով բարձրաձայնում են այն խնդիրների մասին, որոնց կրողն են, օրինակ՝ կարօտի, արդարութեան կամ յիշողութեան: Դա կարող են անել թէ՛ անմիջապէս երգերի միջոցով, թէ՛ հարցազրոյցների ժամանակ այդ մասին բարձրաձայնելով:

Հայօճախներում ապրող եւ հայկականութեան խնդիրներով մտահոգ, միաժամանակ այլ երկրի մշակութային գերիշխանութեան տակ գտնուող երիտասարդները ստեղծագործում են իրենց մտահոգող խնդիրների շուրջ իրենց հասանելի գործիքներով:

ԱՄԵՐԻԿԱՀԱՅ ՌՈՔ ԵՐԱԺԻՇՏՆԵՐ

***Apex Theory/Mt. Helium***

Խումբը ստեղծուել է էթնիկ պատկանելութեան շնորհիւ: Մենակատար Էնդի Խաչատրեանը, կիթարահար Արտ Քարամեանը եւ բաս կիթարահար Դաւիթ Յակոբեանը հայկական ծագում ունեն: Մեծանալով Լոս Անջելըսի արուարձաններում՝ նրանցից իւրաքանչիւրը ծանօթացել է համաշխարհային երաժշտութեան տարբեր ժանրերի, ինչպէս նաեւ փոփ, ջազ եւ դասական երաժշտութեան հետ: Թմբկահար Սեմի Ջէյ Ուոթսընը, ով ծագումով հայ չէ, մեծացել է Չիմակումում (Վաշինգտոն) եւ ծանօթացել Խա-

[22] Միայն որոշակի աժէքներ ընդունող:

[23] Ռ. Կարապետեան, "Հայկական սփիւռքի ներուժի ուսումնասիրման եւ ներառման ուղիները", *Պատմութիւն եւ մշակոյթ հայագիտական հանդէս*, 2(20):2023:

չատրեանի, Քարամեանի եւ Յակոբեանի հետ այն բանից յետոյ, երբ Apex Theoryն չի կարողացել գտնել խմբի համար յարմար թմբկահար: Մէկ լսումից յետոյ Ուոթսընը պաշտօնապէս դարձաւ խմբի անդամ եւ յայտարարուեց The Apex Theoryի ստեղծումը 1999ին: 2000ին նրանք ինքնուրոյն թողարկեցին Extendemo մինի ալբոմը, որից յետոյ ձայնագրման ստուդիաները փորձեցին պայմանագիր կնքել խմբի հետ: Apex Theoryն չէր շտապում դա անել. նրանք պարզապէս ցանկանում էին կենդանի ելոյթներ ունենալ: Այնուամենայնիւ, 2001ի սկզբին The Apex Theoryն պայմանագիր կնքեց DreamWorksի հետ, իսկ արտադրիչ Դոն Գիլմորը (Linkin Park, Pearl Jam, Sugar Ray երաժշտական խմբերի արտադրիչ) պայմանագիր կնքեց իրենց առաջին լիարժէք մինի ալբոմի համար, որը թողարկուեց նոյն տարում: «Shhh...(Hope Diggy)» բեմելային *սինգլը*[24] նրանց օգնեց գլխաւորել 2002ի MTV2 շրջագայութիւնը երաժիշտ Andrew W.K.ի, Pressure 4-5 եւ Lostprophets ռոք խմբերի հետ: Այդ տարուայ Ապրիլին թողարկուեց Apex Theoryի առաջին արհեստավարժ ձայնագրութեամբ Topsy Turvy լիամետրաժ ալբոմը: Նոյն թուականի Ապրիլին թողարկուեց Apex Theoryի առաջին լիամետրաժ արհեստավարժ ալբոմը՝ "Topsy Turvy"[25]: 2004ին խումբը հրապարակեց *Inthatskyis something watching* մինի ալբոմը: Խմբի անունը **Mt. Helium** փոխելուց յետոյ խումբը թողարկեց իր երկրորդ՝ Faces ալբոմը: Նրանց երգերի թեմաները կենտրոնացած են պայքարի, արդարութեան գաղափարների շուրջ:

***System of a Down (SOAD)***

Հայ-ամերիկեան ռոք խումբ՝ ձեւաւորուած 1992ին Լոս Անջելըսում Սերժ Թանկեանի[26] եւ Տարօն Մալաքեանի[27] կողմից այն ժամանակ՝ Soil անունով: Սա թերեւս ժամանակակից ռոք խմբերից ամենայայտնիներից մէկն է ոչ միայն Հայաստանում, այլեւ ամբողջ աշխարհում: Ժամանակակից անուանումը ձեռք է բերել 1995ին: Խմբի բոլոր անդամները հայկական ծագում ունեն: Սկզբնապէս խումբը պէտք է կոչուէր «Victims of the Down»՝ ըստ Մալաքեանի գրած բանաստեղծութեան: Խմբի անդամների ընդհանուր քննարկման ժամանակ որոշուեց «victims» բառը փոխարինել առաւել ընդհանուր «system» բառով: 1997ին ձայնասկաւառակ թողարկելու նպատա-

---

[24] Սինգլ (անգլ.՝ Single, Single Play recordից), ի սկզբանէ եղել է ձայներիզ, որի մէկ կողմում տեղաւորւում էր մէկ երգ: «Սինգլ» եզրոյթը առաջացել է 1950ականներին, որպէսզի երկարատեւ սկաւառակները տարբերուեն 1-2 երգանոց ձայներիզներից: Ներկայում սինգլները թողարկվում են CD եւ DVD սկաւառակներով:

[25] Տես՝ https://www.allmusic.com/artist/the-apex-theory-mn0000751245 :

[26] Տես՝ https://serjtankian.com/ :

[27] Տես՝ https://web.archive.org/web/20220201080635/https://avproduction.am/?ln=am&page=person&id=552 :

կով երաժիշտները պայմանագիր կնքեցին հանրայայտ երաժշտական արտադրիչ Ռիք Ռուբինի հետ, ապա սկսեցին ձայնագրել իրենց առաջին *System of a Down* ձայնասկաւառակը: Վերջինս թողարկուեց 1998 Յունիսի 30ին եւ հինգ տարուայ ընթացքում վաճառուեց գրեթէ մէկ միլիոն օրինակով: Այս սկաւառակին բնորոշ է նիւ-մետալ ոճը: «Spiders» եւ «Sugar»

սինգլները դարձան ամենայաջողուածները սկաւառակից: *System of a Down* ձայնասկաւառակը ներկայացնում է Slayer եւ Metallica խմբերի համերգերի ինչպէս նաեւ *Ozzfest* փառատօնի ժամանակ, որտեղ System of a Downը հանդէս էր գալիս որպէս համերգի սկզբում նուագող խումբ[28]: 1998-2005՝ խումբը հինգ արհեստվարժ ձայնագրութեամբ ձայնասկաւառակ է թողարկել, որոնցից իւրաքանչիւրը դարձել է պլատինէ[29] (առաւել յաջողակը եղել է *Toxicity*ին՝ բազմապլատինէ[30]), ընդհանուր՝ 12 միլիոն քանակով: 2006ին System of a Down խմբի անդամները ժամանակաւորապէս որոշեցին դադարեցնել համատեղ գործունէութիւնը եւ զբաղուել անհատական նախագծերով: Քրիս Հարիսի հետ հարցազրոյցում (MTV News) Մալաքեանը ասում էր, որ խումբը չի կազմալուծւում, որովհետեւ եթէ իսկապէս այդպէս լինէր, ապա 2006ին Ozzfestում կայացած համերգը չէր լինի: «*Մենք չենք պատրաստում երկարատեւ արձակուրդի մեկնել եւ անհատական նախագծեր իրականացնել,*- շարունակում Տարօնը,- *մենք Systemում ենք աւելի քան 10*

[28] Տես՝ https://systemofadown.com/ :

[29] Վաճառքների քանակով պայմանաւորուած դասակարգում է, որով չափւում է երաժիշտի յայտնիութիւնը: Տարբեր երկրների համար (կախուած բնակչութիւնից) կարգավիճակ ստանալու համար պահանջուող վաճառուած օրինակների քանակը տարբեր է. ԱՄՆում՝ 1 միլիոն օրինակ, Մեծ Բրիտանիայում՝ 300.000, Լեհաստանում, Իտալիայում, Սպանիայում, Կանադայում, Ուկրաինայում՝ 100.000:

[30] Պլատինէ սկաւառակի վաճառքի կրկնապատիկ եւ աւելի վաճառքների դէպքում, սկաւառակը համարւում է բազմապլատինէ:

*տարի, եւ, ինձ թւում է, հիանալի է լքել խումբը որոշ ժամանակով եւ յետոյ վերադառնալ»*[31]:

2006ին երաժիշտները նաեւ մասնակցեցին Կառլ Կարապետեանի «Ճչացողները» («Screamers») ֆիլմի ստեղծմանը, որը պատմում է հայերի ցեղասպանութեան մասին[32]:

2010 Նոյեմբերի 29ին խումբը յայտարարեց կրկին միաւորուելու եւ 2011ին եւրոպական շրջագայութիւն անցկացնելու մասին: 2015 Ապրիլի 23ին խումբը «Wake up the souls» շրջագայութեան շրջանակներում (նուիրուած Հայոց Ցեղասպանութեան 100ամեակին) այցելեց Երեւան եւ անվճար համերգ տուեց Հանրապետութեան հրապարակում: Ապա կրկին նրանք շարունակեցին անհատական աշխատանքները:

2020ի 44օրեայ պատերազմի ժամանակ խումբը կարճ ժամանակով կրկին վերամիաւորուեց եւ թողարկեց եւս 2 երգ՝ ընդգծուած հակապատերազմական թեմայով՝ «Ցեղասպան մարդակերպեր» /«Genocidal humanoidz»/ եւ «Նրանք պաշտպանում են երկիրը» /«They protect the land»/: Այդ կարճատեւ վերամիաւորումը Հայաստանի՝ պատերազմի մէջ գտնուող բնակչութեանը բաւականին ոգեւորիչ թուաց: Դա նաեւ օգնում էր արուեստի լեզուով խօսել այն մասին, ինչի մասին շատերը կա՛մ ստում, էին կա՛մ լռում: «Genocidal humanoidz» երգում նրանք յստակ բաժանում էին անում՝ անուանելով մի կողմին «մենք» (սրանով նաեւ իրենց էին նոյնացնում՝ որպէս հայ ազգի ներկայացուցիչ), միւս կողմին՝ «չարքեր»: Իսկ տեսահոլովակում ակնյայտ հայ-թուրքական հակամարտութիւնը արտայայտուած էր Հայաստանի քարտէզի, Եղեռնի 100ամեակի խորհրդանիշ անմոռուկի համադրութեամբ: Այս ամէնը միջազգային խուսափողական դիւանագիտութեանը[33] զուգահեռ: Այս ամէնով ռոքը յստակօրէն ընդգծում է իր դիրքորոշումը՝ որպէս պայքարող եւ ըմբոստ երաժշտութիւն:

***Scars on Broadway***[34]

Ամերիկեան *ալտերնատիւ* ռոք-խումբ, System of a Down խմբի կիթարահար Մալաքեանի եւ թմբկահար Ջոն Դոլմայեանի երաժշտական նախագիծը: Խմբի առաջին համանուն ալբոմը թողարկուեց 2008 Յուլիս 29ին, որից

---

[31] Տես՝ https://webcitation.org/61Dfzmvk3?url=http://www.vh1.com/news/articles/1530066/05032006/system_of_a_down.jhtml :

[32] Տես՝ https://www.youtube.com/screamersmovie :

[33] Այդ նոյն ժամանակ միջազգային բոլոր կառոյցները որեւէ յստակ բնորոշում չէին տալիս իրադարձութիւններին եւ չէին մատնանշում՝ ո՞ր կողմն է սկսել հակամարտութիւնը: Պաշտօնապէս նաեւ կողմերից մէկին «պաշտպանուող» եւ միւսին «յարձակուող» անուանելը համարւում էր ոչ ճիշտ:

[34] Տես՝ https://scarsonbroadway.com/ :

յետոյ խումբը մեկնեց համերգային շրջագայութեան Եւրոպայում եւ Ամերիկայում: Խմբի ոճը նման է System of A Down խմբին, բայց երգերի խօսքերի հեղինակը Մալաքեանն է (System of A Down խմբում խօսքերի հեղինակը մեծ մասամբ Սերժ Թանկեանն էր): Երգերն ունեն ակնյայտ քաղաքական ուղղուածութիւն. "Exploding/ Reloading", "3005", "Lives" երգերը նուիրուած են Հայոց Ցեղասպանութեանը: Ժամանակի ընթացքում ազգային թեմաները աւելի են ընդգծւում Scars on Broadway խմբում, քան System of A Down խմբում էին: Թեմաները եւ խօսքերը բաւականին կտրուկ են եւ սադրիչ: Համարձակօրէն իրերն իրենց անուններով են կոչում եւ առաջ են քաշւում ժամանակակից աշխարհի ակնյայտ թերութիւնները՝ քննադատելով դրանք:

***Մարգարիտա Մոնէ***

Մարգարիտա Մոնէն Դէյլ Բէյցի հետ Edge of Paradise խմբի հիմնադիրն է: Նա երգչուհի է եւ դաշնակահարուհի: Չորս տարեկանից խորապէս հետաքրքրուել է կատարողական արուեստով՝ երաժշտութեամբ, բալէտով եւ թատրոնով: Մանկուց հանդէս գալով արհեստավարժ բեմադրութիւններում՝ նա շրջագայել ամբողջ Եւրոպայում: Նա նաեւ արհեստավարժ՝ դաշնամուրի մրցոյթների մրցանակակիր դաշնակահարուհի է:

Նա Լոս Անջելըս է տեղափոխուել 2012ին եւ սկսել աշխատել տեղական արտադրիչի հետ: Երգերի վրայ աշխատելիս նա հանդիպեց Բէյցին, ով փնտռում էր մեներգիչ: Շուտով նրանց երաժշտական գործակցութիւնը հսկայական արդիւնքներ տուեց եւ ստեղծուեց խումբ, որը կոչուեց՝ Edge of Paradise[35]:

---

[35] Տես՝ https://www.edgeofparadiseband.com/ :

Խումբը միասին թողարկել է չորս ալբոմ, բազմաթիւ երաժշտական տեսահոլովակներ եւ շրջագայել աւելի քան 30 երկրներում:

Բացի այդ, Մարգարիտան զբաղուել է տեսողական արուեստով եւ վաճառել հազարաւոր բնօրինակ նկարներ եւ արուեստի մասին գրքեր: Ներկայումս նա աշխատում է փոխներազդող գծանկարային վէպի թողարկման վրայ, որը պատմում է խմբի վերջին՝ «Հոլոգրամ» ալբոմի ապագայապաշտական եւ խորը պատմութիւնը:

Նա մի հարցազրոյցում խօսում է նաեւ իր արմատների՝ հայկական ծագման, եւ տարբեր երկրներում ապրելու իր փորձի մասին[36]: Թէեւ Մարգարիտան իր ծագման մասին բացայայտ է խօսում, բայց նրա երգերում ընդգծուած քաղաքական կամ ազգային թեմաներ չկան: Երգերը մարդկային ապրումների, վախերի, միայնութեան եւ սիրոյ մասին են:

***Դերէկ Շերինեան***

Դերէկ Շերինեանը[37] ծնուել է Կալիֆորնիայում, 1966 Օգոստոս 25ին: 5 տարեկանից սկսել է նուագել դաշնամուր: Պատանի տարիքում իր ունեցած երաժշտական տաղանդի շնորհիւ ընդունւում է Բերկլիի երաժշտական քոլէջ, անցկացնելով այնտեղ 3 տարի նա ներկայանում է Jimi Hendrix's Band of Gypsys խմբի նախկին թմբկահար Բադի Մայլզին: 1987 Սեպտեմբերին Մայլզը ընդունում է Դերէկին աշխատանքի՝ ռոք եւ բլուզ ակումբներում համերգ տալու համար: 1989ին Շերինեանը աշխարհահռչակ ռոք երաժիշտ Էլիս Կուպըրի (**Alice Cooper**) հետ մեկնում է հիւրախաղերի՝ ի աջակցութիւն վերջինիս պլատինի կոչում ստացած Trash ալբոմի: Ապա մասնակցում է 250 համերգի, ինչպէս նաեւ 2 ալբոմի ձայնագրութիւնների: 1991ին ամերիկեան հանրայայտ Kiss խմբի հետ մասնակցում է հիւրախաղերի եւ ձայնագրում Alive III ալբոմը: 1994 Սեպտեմբերին Dream Theater խմբի հետ մեկնում է հիւրախաղերի եւ նրան առաջարկում են դառնալ Dream Theater խմբի լիարժէք անդամ[38]:

---

[36] Աւելի մանրամասն տես՝ https://www.legendaryrockinterviews.com/2012/01/11/legendary-rock-interview-with-margarita-monet-vocalist-of-edge-of-paradise/ :

[37] Տես կայքը՝ https://dereksherinian.com/ :

[38] Տես՝ https://www.peoples.ru/art/music/metal/derek_sherinyan/ :

Մի հարցազրոյցում նա պատմել է, որ հօր կողմից հայ եւ մօր կողմից՝ յոյն է: Հօրից իմացել է, որ նախնիներն ապրել են Արեւմտեան Հայաստանի Արաբկիրում: Նրա տատ Եղիսաբէթ Եազըճեանի ընտանիքը շատ հարուստ էր, մեծ հողատարածքների տէր: Եղիսաբէթի հայրը նաեւ զբաղւում էր ադամանդի արդիւնահանմամբ եւ մշակմամբ ու դրանք Հոլանդա էր մատակարարում: «*Վերջին այցս Երեւան ամենապպաւորիչն էր*,- պատմում է Դերէկը,- *կապ հաստատուեց իմ բարեկամների հետ, որոնք ինձ ուղեկցեցին նախապատիս գերեզման. անպատմելի զգացողութիւններ էին: Ես չափազանց հպարտ եմ, որ հայ եմ*»[39]:

ԻՐԱՆԱՀԱՅ ՌՈՔ ԵՐԱԺԻՇՏՆԵՐ

**Մետաֆոր,** հայկական *մետալ* խումբ: Կազմաւորուել է 2010ին Երեւանում՝ իրանահայեր Արիս եւ Արին Քարամեանների կողմից: Խումբը հանդէս է գալիս մետալ ռոքի տարբեր ոճերում՝ պրոգրեսիւ մետալ (Progressive Metal), թրէշ մետալ (Thrash Metal), դում մետալ (Doom Metal), սփիդ մետալ (Speed Metal) եւն.: 2012 Դեկտեմբեր 21ին խումբը ելոյթ է ունեցել «End of the World Metal Requiem» փառատօնի շրջանակներում:

Նրանք բնակութիւն են հաստատել Հայաստանում[40], որտեղ էլ շարունակում են աշխատել:[41] Նրանց երգերը կեանքի դժուարութիւնների, դրանց յաղթահարումների եւ համամարդկային ապրումների մասին են:

***Լիբանահայ ռոք երաժիշտներ***

**Այլին Խաչատուրեան**

Ծնուել է 1978ին Բէյրութում, արուեստագէտների ընտանիքում: Սովորել է Բէյրութի Հռիփսիմեանց հայկական վարժարանում, տեղափոխուելով Կանադա՝ Մոնրէալի Ս. Յակոբ վարժարանում, այնուհետեւ վերադառնում Լիբանան, այնտեղ սովորում է Համազգայինի Հայկ եւ Մելանքթոն Արսլանեան ճեմարանում, աւարտում Լիբանանի Moderne ուսումնարանը, ապա երկու տարի հետեւում է Ս. Ժոզէֆ համալսարանի կինոյի դասընթացներին,

---

[39] Տես՝ https://auroraprize.com/hy/derek-sherinian :

[40] Ներկայումս նրանք ստեղծել են Adana Project խումբը, որը գործում է Հայաստանում:

[41] Տես՝ https://archive.is/HDOuF :

մեկնում Փարիզ, ուր մնում է 5 տարի, յաճախում հայկական հին երգերի գործնական դասերին, դրան զուգահեռ՝ Սորբոնի համալսարանի Կինեմատոգրաֆի բաժինը, ստանում «մշակութային միջոցառումների կազմակերպում» մասնագիտութիւնը: 18 տարեկան հասակում արժանանում է Սելին Դիոն մրցանակին: Հինգ տարուց աւելի համերգերով ելոյթներ է ունենում լիբանահայ դաշնակահար Գի Մանուկեանի հետ: 19 տարեկանում ձայնագրում է իր առաջին երգը (Լամմա) արաբական ջազ ոճով. Դուբայ տեղափոխուելով՝ աշխատում է իր առաջին ձայնասկաւառակի՝ «Միտան»ի (Իմ տուն) վրայ, որն աւարտին է հասնում 2008ին: Այն 2009ի «Armenian Music Awards» մրցանակաբաշխութեան շահեց «Լաւագոյն ռոք-ալբոմ» մրցանակը: 2020ին Բէյրութի նաւահանգստի պայթիւնից[42] տուժածներին օգնելու համար կազմակերպուած առցանց համերգին Այլինը եւս իր մասնակցութիւնն ունեցաւ[43]:

Միտանը նրա երկրորդ ալբոմն է, լոյս է տեսել 2008ին: Ձայնագրուել է Դուբայում: Սկաւառակում տեղ են գտել ռոկ-երաժշտութեամբ կատարած յայտնի հայկական ժողովրդական երգեր: Ալբոմի երգացանկում ընդգրկուել են Գարուն ա, Քարաւան, Նուբար, Տլէ եաման, Քէլէ քէլէ, Սարի սիրուն եար, Առաւօտ, Զարթիր որդեակ, Օրօր երգերը: Ըստ էութեան, Այլինը վերարտադրում է հայկական ժողովրդական երգերը ռոք մեկնաբանութեամբ՝ դրանց հաղորդելով նոր շունչ:

***Ռուսահայ ռոք երաժիշտներ***

**Պիկասսոյի զաւակները/Дети Пикассо**. խումբը ստեղծուել է 1997ին՝ ռոքի եւ ֆոլկ երաժշտութեան ոլորտում փորձերի արդիւնքում՝ Գայա եւ Կարէն Յարութիւնեանների կողմից: 2002ին խումբը ելոյթ ունեցաւ «Սիրին» կանացի երգի փառատօնում ու «Нашествие» («Գրոհում») ռոք փառատօնում եւ հեռարձակուեց «Наше радио»ի (Մեր ռադիո) եթերով: *FUZZ* ամսագրի մրցանակաբաշխութեան ժամանակ խումբը ճանաչուել է իբրեւ «2002ի լաւագոյն նոր խումբ»: 2000ականների ընթացքում խումբը ձայնագրել է միքանի ալբոմներ տարբեր ոճերում՝ ռուսերէն եւ հայերէն: 2007ին խումբը մշտական բնակութեան նպատակով Մոսկուայից տեղա-

---

[42] Տես՝ https://www.azatutyun.am/a/30767529.html

[43] Տես՝ https://hyetert.org/2020/09/18/%D6%84%D5%A5%D5%A6%D5%AB-%D5%B0%D5%A1%D5%B4%D5%A1%D6%80-%D5%BA%D5%A7%D5%B5%D6%80%D5%B8%D6%82%D5%A9/ :

փոխուեց Բուդապեշտ, որտեղ ստեղծագործում են նորովի, ինչի արդիունքում "Picasso Children"ը վերածուել է ժամանակակից արեւելաեւրոպական երաժշտութեան հզօր ոճի կրող, որը պահանջուած է աշխարհի շատ երկրներում: Այնտեղ նրանք թողարկեցին միքանի ալբոմներ: «*Ժամանակակից ընդյատակեայ մշակոյթը մեր իսկական ժամանակակից արուեստն է, որը կայ այստեղ եւ հիմա: Պետութիւնը աջակցում է բառացի իմաստով՝ ոչ խօսքով, ոչ էլ յանուն ինչ-որ ձեւականութեան*»,- ասել է Գայիան[44]:

***Եուրի Կասպարեան***

1980ականներին "Կինօ" խմբի կիթարահար էր: 1983ին խմբի հիմնադիր եւ մենակատար Վիկտոր Ցոյը Կասպարեանին հրաւիրեց խումբ, իսկ միքանի տարի անց Եուրին դարձաւ խմբի երաժշտական առաջատարը: Ըստ Ցոյի կենսագրի՝ «*Հենց Եուրիի ինքնատիպ նուագը մեծ մասամբ բնորոշեց 80ականների վերջի դասական «Կինոյի» դէմքը, ու ինչպէս եւ ինքը՝ Կասպարեանը, դարձաւ խմբի երաժշտական ոճի մարմնացումը*: ... Կասպարեանը հիմա էլ համարւում է Ռուսաստանի լաւագոյն կիթարահարներից մէկը ու, թերեւս, ա-

[44] Հարցազրոյցը տես՝ https://www.yerkramas.org/article/10042/deti-Picasso-s-armyanskogo-na-russkij :

մենաճանաչելին»[45]: 1990ականներին սկսեց ձայնագրել *ինտելեկտուալ*, առաջադէմ երաժշտութիւն[46]: Նա այժմ էլ գործակցում է ռուսաստանեան ռոք երաժիշտների հետ:

***Ստաս Նամին (Անաստաս Ալեքսէյի Միկոյեան)***

Հայրը՝ Ալեքսէյ Անաստասի Միկոյեանը, ռազմական օդաչու էր: Մայրը՝ Նամի Արտեմի Միկոյեան (Յարութիւնովա), երաժիշտ, արուեստաբան, գրող: Հենց նրա անունն էր Ստասը վերցրել որպէս ստեղծագործական ծածկանուն: Անաստաս Միկոյեանը (Ստաս Նամին) անուանակոչուել է 1923-76ի ԽՍՀՄ յայտնի քաղաքական գործիչ Անաստաս Իւանի Միկոյեանի՝ հայրական պապի անունով: Պապի հարազատ եղբայրը՝ Արտիոմ Իւանի Միկոյեանը, օդանաւերի յայտնի գիւտարար է, ՄԻԳ ինքնաթիռի ստեղծողը: Իսկ ինքը խորհրդային ռոք-մշակոյթի հիմնադիրներից մէկն է, նաեւ առասպելական «Ծաղիկներ» խմբի հիմնադիրը, ով իր գրեթէ յիսունամեայ գործունէութեան ընթացքում վաճառել է աւելի քան 60 մլն. ձայնապնակ Խորհրդային Միութեան երկրների տարածքում, բազմաթիւ հանրաճանաչ («Ամառային երեկոյ», «Իսկապէս կարօտ», «Մենք ձեզ երջանկութիւն ենք ցանկանում» եւն.) երգերի հեղինակ: Կազմակերպել է Ռուսաստանում առաջին անկախ արտադրական SNC կենտրոնը, որտեղից դուրս են եկել ռուսական աստղերից շատերը, որոնցից մէկն էլ Նամինի ստեղծած «Gorky Park» խումբն էր: Երկրում առաջին պոպ եւ ռոք-փառատօների, այդ թւում՝ «Միասնական աշխարհ», «Ռոք Կրեմլից», 1989ին Լուժնիկիում կայացած Խաղաղութեան փառատօնի եւ այլ փառատօների կազմակերպիչն է: Ստեղծել է ձայնագրական ընկերութիւն, ռադիոկայան, հեռուստաընկերութիւն, համերգային գործակալութիւն, գեղարուեստական ձեւաւորման գրասենեակ եւն., որոնք, կոտրելով պետութեան մենաշնորհը, դարձել են ռուսական *շոու-բիզնէս*ի սկիզբը: Կազմակերպել է առաջին ոչ-

---

[45] Մանրամասն տես՝ Ա. Գրիգորեան «Վիկտոր Ցոյ, Շնորհակալութիւն, որ եկաք ու օգնեցիք Հայաստանին» http://art-collage.com/post/Victor-Coy :

[46] Ինտելեկտուալ երաժշտութիւն են անուանում այն ցանկացած երաժշտութիւնը, որը տանում է արտացոլման, մտորումների, ներհայեցման: Նման բնութագրերը կարող են լինել կառուցուածքային բարդութեան աստիճանը, ոչ-պարզ գաղափարների արտայայտումը, անսովոր ձայնային տեմբրերի օգտագործումը, յատուկ յուզական եւ տեղեկատուական բովանդակութիւնը:

պետական սիմֆոնիկ նուագախումբը եւ երկրում առաջին միւզիքըլ թատրոնը: 1969ի վերջում, Վուդստոկի առասպելական փառատօնից տպաւորուած, նա ստեղծում է «Ծաղիկներ» նոր խումբը, որը յետագայում դառնում է ազգային (սովետական ապա ռուսական) առաջին խումբը եւ փաստօրէն երկրի զանգուածային մշակոյթում դնում է ռոք-շարժման սկիզբ:

2000ից իվեր Նամինը զբաղւում է անհատական գործունէութեամբ:

Որպէս թատերական բեմադրիչ ու արտադրիչ Նամինը իր 1999ին ստեղծած թատրոնում զբաղւում է ներկայացումների բեմադրութեամբ, որոնցից առաջիններն էին ամերիկեան հանրահռչակ «Hair»[47] *միւզիքըլը* եւ «Jesus Christ Sperstar» ռոք-օպերան. երկուսն էլ արդէն երկու տասնամեակ բեմահարթակից չեն իջնում: Նա հեղինակել է նաեւ փաստագրական ֆիլմեր, որոնցից ամենայայտնին է «Древние храмы Армении» (Հայաստանի հին վանքերը)[48]:

2020ի Արցախեան պատերազմի ժամանակ նա աջակցել է հայ ժողովրդին, եւ նաեւ հանդէս եկել հրապարակային յայտարարութիւններով եւ հարցազրոյցներով[49]:

***Թուրքահայ ռոք երաժիշտներ***

**Եաշար Քուրթ**[50]. ծնուել է Ստամբուլում 1968ին, երաժշտութեանը ծանօթացել է տարրական դպրոցական տարիքից: Այս շրջանում նա իր ուսուցիչ Բեհրուզ Ֆիրուզմենտի խրախուսմամբ սկսել է երաժշտութիւն գրել իր խաղացած եւ բեմադրած թատերախաղերի համար:

Նրա նախնիներն ապրել են Վանի շրջանում՝ հայկական Անձեր գիւղում: 1915ին հայկական ջարդերի ժամանակ ամբողջ ընտանիքը կոտորուեց: Ողջ է մնացել միայն Իսմայիլ անունով ինը տարեկան տղան, ով ոտքով քայլել է Սեւ ծովի ափ, որտեղ նրան փրկել են բարի մարդիկ: Այս

---

[47] Hair.- *միւզիքըլ*, որի երաժշտութիւնը գրել է Գալտ Մաքդերմոտը, բառերը՝ Ջէյմս Ռադօն եւ Ջերոմ Ռանին: Առաջին բեմելը տեղի է ունեցել Նիւ Եորքում 1967 Հոկտեմբերի 17ին, ապա ցուցադրուել է Բրոդուէյում, Լոս Անջելըսում եւ Լոնդոնում: 1999 Նոյեմբերին Մոսկուայի էստրադային թատրոնում ցուցադրուեց ամերիկեան հեղինակային տարբերակը Ստաս Նամինի՝ Մոսկուայի թատրոնի, երաժշտութեան եւ դրամայի թատրոնի հետ համատեղ:

[48] Տես՝ http://stasnamin.com/ :

[49] Տես՝ https://www.armtimes.com/ru/article/199241 :

[50] Տես՝ https://yasarkurt.com/ :

տղան Եաշարի նախապապն էր: Իր ընտանիքի պատմութիւնը նա իմացել է 40 տարեկանում եւ դա յեղաշրջող ազդեցութիւն է ունեցել նրա վրայ: Նա սկսեց սովորել հայոց լեզուն, կարդալ Հայաստանի պատմութեան մասին գրքեր: «*Բարձրաձայն յայտարարելով, որ ես այժմ հայ եմ, ես շատ թշնամիներ ձեռք բերեցի*,- ասում է Եաշարը, ով դարձաւ Արշակ:- *Նոյնիսկ նրանցից ոմանք, ում ես ընկերներ էի համարում, երես թեքեցին ինձանից: Մարդիկ կային, որ ասում էին. լաւ, քանի որ հայ ես, ուրեմն գնա Հայաստան: Ինձ համար դժուար է բացատրել, որ եթէ հայ եմ, ուրեմն այստեղ տանն եմ: Իմ նախնիների հայրենիքն այս երկրի մաս է դարձել ոչ իրենց կամքով: Բայց չնայած դրան, հայերն այնքան բան են արել այս երկրի համար, որ ես կարող եմ հանգիստ հպարտանալ իմ ծագմամբ*»[51]:

2011ին նա Հայաստանում աշխատել է Արտո Թունջբոյաջեանի եւ Armenian Navy Bandի հետ:

***Հայկո Ջեփկին***

Հայկո Ջեփկինը թուրքահայ ռոք երաժիշտ է, ով յայտնի է դարձել յարձակողապաշտ այլընտրանքային երաժշտութեան մէջ մեղեդային գոյներ հաղորդելու իր հմտութեամբ: Հայկօն աշխատում է այնպիսի ոճերում, ինչպիսիք են ռոքը, մետալը, անատոլիական ռոքը[52]: Նա Ստամբուլի հայկական Կեդրոնական վարժարանի շրջանաւարտ է, որտեղ շատ յայտնի հայեր են ուսանել, այդ թւում՝ Միսաք Մեծարենցը, Հրաչեայ Աճառեանը եւ Արա Գիւլէրը:

Ջեփկինը իր երաժշտական գործունէութեան հետ կապուած բազմաթիւ միջոցառումներ կազմակերպել եւ ինքն էլ մասնակցել է: 2006ին, 2007ին եւ 2009ին մասնակցել է Rock'n Cokeին, իսկ 2007ին՝ է Rock Müzikallerին եւ Van için Rockին: Նա ստեղծել է Araf ֆիլմի հիմնական երաժշտութիւնը (Soundtrack), իսկ նրա «Son Kez» երգը Sakin Olmam Lazim ալբոմից նոյնպէս ներառուել է ֆիլմի երաժշտութիւններում:

---

[51] Տես՝ https://ok.ru/vsyaarmeni/topic/65183459120416 :

[52] Անատոլիական ռոք (թրք.՝ Anadolu rock, անգլ.՝ Anatolian rock), թուրքական ժողովրդական երաժշտութեան եւ ռոքի միաձուլման արդիւնքում առաջացած երաժշտութեան ժանր: Սկիզբ է առել 1960ականներին այն բանից յետոյ, երբ արեւմտեան ռոք խմբերը՝ The Beatlesը, Rolling Stonesը, Led Zeppelinը, Yesը, Status Quoն եւ Omegaն, սկսեցին հանրամատչելի դառնալ Թուրքիայում:

Նրա իւրայատուկ արտաքինը ճանաչելի է դարձրել Հայկոյին, թէեւ սկզբում բարդոյթների պատճառ էր: Նա շատ ինքնատիպ եւ կերպարային երաժիշտ է, ինչի շնորհիւ նաեւ նկարահանւում է ֆիլմերում[53]:

2018 Փետրուարին թուրքահայ մտաւորականների հետ միասին միացել է Պոլսոյ պատրիարքի թեկնածուի ընտրութեան վերաբերեալ կոչին [54]:

***Meluses***

Համշէնահայ այս ռոք խումբը ստեղծուել է Ստամբուլում: Խումբը ներկայացնում է ֆոլկ-ռոք՝ համշէնահայերէն բարբառով: Ժամանակին նրանց «Գարմի» եւ «Խադուլիկ» երգերը բաւականին աղմուկ բարձրացրին ունկնդիրների շրջանում: «Խադուլիկ» բառը համշէնի խօսուածքում նշանակում է՝ շատ գեղեցիկ եւ խայտաբղէտ: Համշէնագէտ Սերգէյ Վարդանեանը[55] երգը գրական հայերէնի վերածելիս՝ օգտագործել է «խատուտիկ» բառը, որն այս պարագայում առաւել համահունչ է նաեւ երգի խօսքին:

Մելուսես՝ (մեր լոյսը) խմբի երգերի եւ երաժշտութեան հեղինակը մեծ մասամբ Մաղրուֆ Քիբարն է: Նա ասում է, որ հենց այս առաքելութիւնն է ներդրուած խմբի էութեան եւ երաժշտական ոգու մէջ: «*Այս իմաստն ենք*

---

[53] Տես՝ https://www.hurriyet.com.tr/kelebek/magazin/hayko-cepkin-hayata-eksi-1-ile-basladim-41705014 :

[54] Տես՝ https://hetq.am/hy/article/85976 :

[55] 1980ականներից սկսած՝ Վարդանեանը զբաղւում է համշէնահայերի բանահիւսութեամբ, բարբառի եւ երգարուեստի ուսումնասիրութեամբ, հրատարակել է բազմաթիւ յօդուածներ եւ բանահիւսական նիւթեր, որոնց մեծ մասը տպագրուել է իր իսկ կողմից հրատարակուող *Ձայն համշէնական* թերթում: 2009ին հրատարակել է նաեւ *Կրօնափոխ համշէնահայերի բարբառը, բանահիւսութիւնը եւ երգարուեստը* գիրքը:

*տեսնում մեր երաժշտութեան մէջ եւ հենց սա էլ ուզում ենք փոխանցել մարդկանց,*- ասում է նա,- *«Մեր լոյսն» ասելիս՝ իրականում նկատի ունենք նաեւ այն, որ մեր երգերով կարող ենք բոլորի լոյսը լինել»*[56]:

Նրանք երգում են Համշէնի բարբառով, մասամբ՝ նաեւ թուրքերէն: Խմբի երգացանկում յաճախ են հնչում համշէնական ժողովրդական երգեր, ինչպէս Մաղրուֆն է ասում՝ անանուն երգեր: «*Մեծ մասամբ նոր գրուած երգեր են, բայց յաճախ, հիմնականում համերգերի ժամանակ, ներկայացնում ենք անանուն երգեր եւ մեղեդիներ: Թեմաները տարբեր են՝ աշխարհին վերաբերող ամէն ինչ, մինչեւ իսկ՝ աշխարհի վերջը*,- ասում է Քիբարը,- *երգում կամ նուագում ենք այնպէս, ինչպէս տեսնում ենք կեանքը, նայում աշխարհին: Սէր, բնութիւն, փորձութիւններ, կարօտ, երաժշտութեամբ պատմում ենք երբեմն էլ բաներ, որոնք խօսքերով չենք կարողանում պատմել*»: Իսկ երաժշտական ոճի մասին թէեւ հենց խումբը ինքն իրեն չի բնորոշում որպէս ռոք, այնուամենայնիւ այն մոտ է ֆոլք ռոքին, ուստի մենք չենք կարող շրջանցել նրանց:

Համշէնահայերն իրենք ինքնութեան մասին խօսում են ամենատարբեր կերպով, մի մասն իրեն թուրք է համարում, մի մասը հայ, մի մասն առհասարակ հրաժարւում է խօսել այդ մասին: «*Դէ՛, թուրք չենք էլի, հօ՛ սրիպելով չի: Որովհետեւ տարբեր մի մշակոյթ, տարբեր մի լեզու, տարբեր մի ինքնութիւն կայ այստեղ: Ես սա թրքութեան մէջ չեմ կարողանում տեղաւորել, կը ներէք: Բայց միւս կողմից էլ՝ չնայած նոյն լեզուի կրողը լինելուն, հայկական ինքնութեան մէջ էլ ամբողջութեամբ չեմ կարողանում տեղաւորել համշէնականութիւնը*»[57]՝ ասում է «Վովա» ժողովրդական երգի խմբի մենակատարը: Համշէնահայերն իրենց ինքնութեան պահպանման համար կարեւորում են իրենց բարբառը, մշակոյթը, ծէսերը: Այնուամենայնիւ, երաժշտական գործունէութիւնը ամենայարմար եւ անվտանգ միջոցն է ինքնութեան դրսեւորման եւ պահպանման տեսակէտից, ուստի համշէնահայերն ունեն նաեւ ժողովրդական երգի խմբեր («Վովա», «Էնտու» եւն.):

### *Իսրայէլահայ ռոք երաժիշտներ*
### *Apo & the Apostles եւ Ափօ Սահակեան*

Ափօ Սահակեանը փոփ-ռոք երաժիշտ է, ով ծնուել է Երուսաղէմի Հին քաղաքի հայկական թաղամասում: Նա ռոք երաժշտութիւնը մօտեցրել է փոփին՝ համադրելով նաեւ բլուզ եւ էթնիկ տարրերի հետ, աւելի ընկալելի

---

[56] Տես՝ https://hetq.am/hy/article/78291 :

[57] Տես՝ https://azator.gr/%D5%BE%D5%B8%D5%BE%D5%A1-%D5%AD%D5%B4%D5%A2%D5%AB-%D5%B4%D5%A5%D5%B6%D5%A1%D5%AF%D5%A1%D5%BF%D5%A1%D6%80%D5%A8/ :

դարձնելու եւ զանգուածայնացնելու համար: Նա Apo & the Apostles խմբի հիմնադիրն է, ով յայտնի է նաեւ անհատական գործունէութեամբ:

Միաւորելով մասնակիցների բազմակողմանի փորձը՝ խումբը դարձաւ երաժշտական ոճի առաջամարտիկ, որը միաւորում է բլուզ, պարային եւ Արեւելեան տարրեր: Բայց իւրաքանչիւր նոր աշխատանքով Apo & the Apostlesը ձգտում է նոր ոճեր բերել իրենց հնչողութեանը: Նրանց բեմելային սինգլը՝ Baji Wenekը, աւելի քան մէկ միլիոն դիտում է հաւաքել Youtubeում եւ ընկերային ցանցերի այլ հարթակներում: Buzzfeedում եւ այլ կայքերում նրանք ճանաչուել են որպէս տարածաշրջանի ամենայայտնի նոր խմբերից մէկը, որը յայտնի է իր գիշերային համերգերով: Նրանց առաջին "Back to Sababa" ալբոմը օգտագործում է շեփորներ, Արեւելքի ռիթմեր եւ Արեւմուտքի մեղեդիներ, որոնք մարմնաւորուած են առաջատար «Fil Zaman» սինգլում: Նրանց վերջին սինգլը ՝ «Bandora Blues», ընդգրկուած է «Ya Zalamez» չորրորդ մինի ալբոմում: Universal Music ՄԵՆԱի թողարկած սինգլը եւ մինի ալբոմը մեծ ուշադրութիւն են գրաւել տարածաշրջանում խմբի զարգացող եւ բազմազան հնչողութեան շնորհիւ:

Սահակեանն աշխուժօրէն զբաղւում է նաեւ իր անհատական նախագծով, որը նպատակ ունի վերականգնել հայի արժանապատուութիւնը (յատկապէս 2020ի պատերազմի աւարտից յետոյ), վերագտնել ինքնութիւնն ու ուժ գտնել խնդիրների լուծման համար: «Ֆորբս»ի կայքում հրապարակուած ամսագրի մշտական աշխատակից Միքա Հենդլէրի հարցազրոյցում, երաժիշտն ասել է.- «*Ես իմ սոլո նախագծին վերաբերում եմ ոչ թէ գործարարի, այլ հայրենասէրի տեսակէտից: Քանի որ ես մի ժողովրդի զաւակ եմ, որը տեսել է իր բաժին խաւարը, երբեմն ինձ թւում է, որ հայ ժողովրդական երգերի կատարումը շատ աղուտ լոյս է վառում այս շատ մութ թունէլում: Ես իրապէս կարծում եմ, որ հայկական ժողովրդական երգի մէջ կախարդանք կայ: Հենց հիմա մենք՝ հայերս, անդունդն ենք ընկած, բայց աւելի լաւ է այդ*

*անդունդում ինչ-որ ժողովրդական երգեր հնչեն, քան ընդհանրապէս ոչինչ չհնչի»*[58]:

ԱՄՓՈՓՈՒՄ

Հայաստանից դուրս հայկական ռոքը գործում է անկախ եւ ինքնուրոյն, միաժամանակ կապուած լինելով հայկական իրականութեան հետ ընդհանուր յիշողութեամբ եւ պատմական անցեալով:

Այդ անցեալն ազդում է թէ՛ երգացանկի վրայ, թէ՛ երաժշտութեան, որի մէջ կարող են նաեւ յայտնուել ազգագրական ելեւէջներ: Հարցազրոյցների ընթացքում միջազգային լրատուամիջոցների միջոցով բարձրաձայնելով հայոց պատմութեան իրադարձութիւնների մասին՝ երաժիշտները նաեւ կատարում են մասամբ ճանաչողական աշխատանք:

Իվերջոյ ռոքը ոչ միայն երաժշտութեան տեսակ է, այլեւ առաջին հերթին՝ պայքարի գործիք: Յամենայնդէպս իրենք՝ ռոք գործիչներն այդ մասին չեն մոռանում եւ ձգտում են իրենց ստեղծագործական ներուժն օգտագործել պայքարելու համար ինչ-որ բանի դէմ, կամ յանուն ինչ-որ բանի. որպէս կանոն դրանք բաւականին վեհ գաղափարներ են, ինչպէս ազատութիւնը:

PAGES OF ARMENIAN ROCK MUSIC HISTORY
PART A.- THE ARMENIANS IN ROCK MUSIC
(SUMMARY)

MANE KHARATIAN
art.phil.maneh@gmail.com

In the context of Armenian reality, the origin and manifestations of rock music have not been studied at all in the academic field, while the presence of Armenians in world rock culture and the localization of rock in Armenia are very interesting and significant and are worth studying. This series of articles consists of three separate papers, the first of which is devoted to the Armenian presence in the rock music of different countries.

Diaspora Armenians, using the mass nature of music, highlight issues like historical justice, freedom and other concepts in their lyrics. This gives them the opportunity to raise issues which seem intractable in the political sphere. Alongside the above-mentioned historical and noble ideological issues they touch upon topics of human loneliness, love and brotherhood, etc.

---

58 Տես՝ https://azg.am/culture/%d5%a5%d6%80%d5%b8%d6%82%d5%bd%d5%a1%d5%b2%d5%a5%d5%b4%d5%a1%d5%b0%d5%a1%d5%b5-%d5%a1%d6%83%d5%b8-%d5%bd%d5%a1%d5%b0%d5%a1%d5%af%d5%b5%d5%a1%d5%b6%d5%a8-%d5%b6%d5%b8%d6%80-%d5%af%d5%b5%d5%a1%d5%b6/ :